

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԵՆԵՐՃՅԱՆ Գ. Պատմություն Արսլանայեկի: Փարիզ, տպ. Տեր Հակոբյան, 1971 թ., 174 էջ, նկարազարդ:

Արսլանայեկ գյուղը գտնվում է Նիկոմիդիայի կամ Իդմիդի գավառում, որն անցյալում Բյուզանդիա կոչվող երկրի մի մասն էր:

Ինչպես Թուրքիայի հայաբնակ շատ բաղաձայնների և գյուղերի վերաբերյալ, այնպես էլ Արսլանայեկի մասին ստույգ տեղեկություններ և դրավոր վկայություններ չկան, իսկ հին մատենագիրներին ու ճանապարհորդներին հետաքրքրել են միայն պատմական և աշխարհագրական նշանակություն ունեցող վայրերը:

Հեղինակը ընթերցողին համառոտակի ներկայացնում է Նիկոմիդիայի գավառի պատմությունը, նկարագրում նրա աշխարհագրական դիրքը, պայմանները, ծանոթություններ է տալիս նրա վարչական բաժանումների ու բնակչության մասին: «Նիկոմիդիո հայ բնակչությունը» գլխում հեղինակը վկայում է, որ XVI դարից սկսած այստեղ հայերի քանակը աստիճանաբար ավելանում է ի հաշիվ նոր ժամանած այն գաղթականների, որոնք Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ, Սուլթան Սուլեյմանի, Մուրատ երրորդի և Շահ Աբբասի օրերին հաստատվում են այդ նահանգում: Նիկոմիդիայի գավառում ստեղծվում են բազմաթիվ գյուղեր, որոնցից շատերը դուրս հայաբնակ էին (Արսլանայեկ, Արմաշ, Գուրտ Պելեն և այլն):

«Արսլանայեկ» գլխում հեղինակը նկարագրում է գյուղի դիրքը, պատմում է նրա հիմնադրման, հայ բնակչության, նրա տնտեսական ու մշակութային կյանքի մասին:

Գրքի հետագա գլուխներում նկարագրված են արսլանայեկցիների տարազը, բարքերն ու սովորությունները, բարբառն ու բանահյուսությունը, տեղեկություններ են տրված բնակչության տնտեսական կյանքի, դպրոցի, կրթության, երիտասարդության և ազգային շարժումների մասին:

Գրքի վերջում հեղինակը խոսում է այն մասին, թե ինչպես 1894 թ. հրդեհից հետո, երբ Արսլանայեկը աստիճանաբար սկսել էր դառնալ Նիկոմիդիայի առաջադեմ ավաններից մեկը, վրա է հասնում 1915 թ. աղետը, տեղահանվում և աքսորվում է նրա հայ բնակչությունը և շրջակա բոլոր հայկական գյուղերի նման ամայանում է նաև Արսլանայեկը, 1920 թ. Թուրքերը հրդեհելով ավերակի են վերածում այն՝ վերջ տալով նրա երեք հարյուր տարվա պատմությանը:

ԱԿԻՆՅԱՆ Ն. ԵՎ ՈՍԿՅԱՆ Հ. Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատոր Բ, «Անտոնյան հավաքածո»: Վիեննա, Մխիթարյան տպարան, 1971 թ., 324 էջ:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական մատենաշարով լույս տեսած այս հրատարակությունը 1964 թ. Վիեննայում հրատարակված Մ. Քեչիշյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի ձեռագիրներուն» գրքի երկրորդ հատորն է:

Այս հավաքածոյի 295 ձեռագիրները Կ. Պոլսից Զմմառի վանք տեղափոխելուց առաջ Հովսեփ վարդապետ Սարուխանյանը 1925 թ. կազմել է այդ ձեռագրերի ցանկը՝ համառոտ տեղեկություններով: Առաջին հատորում նկարագրված ձեռագրերի 1—422 համարակալումից հետո այս հատորում 423—617 համարների

տակ ցուցակագրված է Հովսեփ Սարուխանյանի նկարագրած 1—230 ձեռագրերի ցանկը, որը կազմել է Ներսես Ակինյանը, երբ նա 1939—1946 թթ. ընթացքում որոշ ընդհատումներով գտնվելիս է եղել Լիբանանում: 1967 թ. Համազասպ Ոսկյանը որոշ ուղղումներով և հավելումներով լրացնում է Ն. Ակինյանի ցուցակը և ցուցակագրում է մնացած 65 ձեռագրերը, որոնք ներկա հատորում ստացել են 618—682 համարները:

Հավելվածի բաժնում 1—37 համարների տակ (էջ 290—294) զետեղված է X—XIX դարերի այն ձեռագրերի ցուցակը, որոնք Ն. Ա-

կինյանի և Հ. Ոսկյանի կազմած ցուցակներում չեն ընդգրկված՝ հավանաբար այն պատճառով, որ Զմմառի վանքը չեն հասել կամ վերոհիշյալ հեղինակներին մատչելի չեն եղել:

Հատորի վերջում ղետեղված են օժանդակ ցանկեր, որոնք օգնում են ընթերցողներին ավելի հեշտությամբ օգտվելու գրքում ընդգրկված

ձեռագրերի ցուցակագրությունից: Դրանք են՝ «Համեմատական տախտակ ձեռագիրներու հին և նոր թվակարգության» (էջ 295—296), «Ժամանակագրական ցուցակ և բովանդակություն ձեռագիրներու» (էջ 297—301), «Տեղանուններու ցանկ» (էջ 302—306), «Անձնանուններու ցանկ» (էջ 307—322):

Documenti di Architettura Armena. 4. S. THADEI' VANK. Milano, Edizioni Ares, 1971, 67 pp., ill.

Ս. Թադեոսի վանքը, որ կառուցվել է քրիստոնեական շրջանի առաջին տարիներին, զբաղեցնում է Իրանի Մակու քաղաքից շուրջ 20 կիլոմետր հեռավորության վրա: Դարերի ընթացքում պատմական այդ հուշարձանը բազմիցս ավերվել ու կործանվել է, բայց կրկին վերակառուցվել է:

Դրբի սկզբում (էջ 7—10) ղետեղված է Թեհրանի գերմանական հնագիտական ինստիտուտի աշխատակից Վոլֆրամ Կլայսի «Սուրբ Թադեոսի վանքը (XII—XIII դդ.)» վերլուծական հոդվածը, որտեղ մանրամասնորեն նկարագրված է այժմյան վանքը՝ իր բոլոր կառույցներով:

«Սուրբ Թադեոս» ընդհանուր խորագրով ուսումնասիրությունը պատկանում է Թեհրանի համալսարանի ճարտարապետական ֆակուլտետի պրոֆեսոր Հուսանգ Սեյհունին: Այստեղ պարսիկ գիտնականը վանքի հայկական ճարտարապետությունը համեմատում է իսլամական պարսկական աշխարհի մի քանի հայտնի հուշարձանների հետ և ընդգծում նրա հայկական ոճի ու մոտիվների ինքնատիպությունը, որի մասին խոսելիս հիշատակում է նաև ճարտարապետական բազմաոճ հուշարձաններով հարուստ Անին: Բնութագրելով այս հուշարձանը, Հուսանգ Սեյհունը գրում է. «Կառուցված լինելով քրիստոնեական շրջանի արշալույսին, քանդված և նորից վերակառուցված ս. Թադեոսը այսօր

հատկանշական է իր ծավալով, որը վիժխարի է, սակայն միաժամանակ՝ ներդաշնակ: Այն ուրվագծվում է բարձրագույն երկու բրգաձև զբաղեցնելով, որոնք տիպիկ հայկական են և որոնք իմ երևակայության մեջ հիշեցնում են մեծ և փոքր Արարատների երկու գագաթները՝ հայերի համար այնքան սիրելի» (էջ 11):

Գրքում ղետեղված է նաև խաժակ Տեր-Գրիգորյանի «Ժամանակագրական համառոտ պատմությունը», որտեղ նշված են վանքի հետ կապված հիշարժան տարեթվերը՝ սկսած 66 թ., երբ, ըստ բանավոր ավանդության, պատմական Հայաստանի Արտաղ զավառում Թադեոս առաքյալը սպանվել է հայոց Սանատրուկ թագավորի հրամանով:

Ինչպես այս մատենաշարի մյուս հատորները, այնպես էլ «Ս. Թադեոսի վանքը» մենագրությունը լույս է տեսել իտալերեն և անգլերեն ղուգահեռ տեքստերով և պարունակում է բազմաթիվ լուսանկարներ ու գծագրեր: Գիրքը լույս է տեսել Միլանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի համագործակցությամբ: Վանքի պատմության և ճարտարապետության մասին հայ և օտար հեղինակների աշխատությունների մատենագիտական ցանկը (էջ 18—19) կազմել է Արմեն Հախնազարյանը:

ՏԱՏՈՒՐ ԱՐՄԵՆ. Անկրկնելի ապրումներ. Կահիրե, տպ. Ոսկետառ, 1971 թ., 231 էջ:

Սփյուռքահայ արձակագիր Արմեն Տատուրի Հայաստան կատարած ուղևորության տպավորությունների ժողովածուն է: Հեղինակը 1969 թ. աշնանը հրավիրվել է Սովետական Հայաստան՝ մասնակցելու Հովհաննես Թումանյանի ծննդյան հարյուրամյակի տոնակատարություններին: Շուրջ երեք շաբաթ տևող իր այցելության ընթացքում նա առիթ է ունեցել ծանոթանալու հայրենիքի և սփյուռքի բազմաթիվ ականավոր անձ-

նավորությունների հետ: Իր ճանապարհորդության ընթացքում պատահած դեմքերի և դեպքերի մասին խոսելիս հեղինակը հետաքրքիր դրվագներ է նկարագրում, որոնցում հոգեկան ջերմությունից բացի նկատվում է նաև վառ հայրենասիրական զգացմունքը՝ հարազատության լավատեսությամբ դրոշմված:

Գիրքը բաղկացած է երկու մասից՝ «Ծամբուս վրա» (էջ 9—56) և «Հայաստանի մեջ»

(էջ 57—229)։ Հեղինակը պատմում է Հայաստանի տարբեր վայրերում իր տեսած հուշարձանների և տեսարժան վայրերի, հայոց լեռների և արևոտ ուղիների, արվեստի ու մշակույթի, հյուրասիրության և հարգալիք վերաբերմունքի մասին։ Հաճախ մանրուքներ թվացող շատ երեվույթներ, Հանապարհորդական նկարագրու-

թյուններ ու առօրյա դրվագներ դարձել են առանձին ուշադրության առարկա։ Գիրքը ձեռնված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակին և իր ուրույն տեղն ունի վերջին տարիներում հրատարակված նմանօրինակ դրականության մեջ։

ԹՅՈՒԹՅՈՒՆՃՅԱՆ ԼԵՎՈՆ. Հարություն ամիրա Պեզնյան և իր ժամանակները (անոր ծննդյան 200-ամյակին առթիվ, 1771—1971)։ Կահիրե, տպ. Ռուկնտառ, 1971 թ., 159 էջ։

Սփյուռքահայ հրապարակագիր, հասարակական գործիչ և արձակագիր Լ. Թյուրյունճյանի այս երկասիրությունը գրված է իր հոր՝ Ռուբեն Ս. Թյուրյունճյանի պատմածների հիման վրա։ Ամիրա Հարություն Պեզնյանը ազդեցիկ անձնավորություն է եղել սուլթան Մահմուդ երկրոր-

դի արքունիքում և զգալի դեր է խաղացել պետության գործերում։

Հեղինակը տալիս է կենսագրական տեղեկություններ և նկարագրում Պեզնյանի ապրած ժամանակները։ Գրքում խոսվում է նաև պոլսահայ բազմաթիվ նշանավոր դեմքերի մասին։

ADONTZ NICOLAS, *Denys de Thrace et les commentateurs arméniens*. Traduit du Russe, Louvain, Imprimerie Orientaliste, 1970, 332 p.

Նիկողայոս Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» աշխատությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1915 թ. Ս. Պետերբուրգում ռուսերեն լեզվով, քիչ է հայտնի արևմտյան աշխարհում։ Բելգիայի Լուվեն քաղաքում տպագրված այս հատորը այդ երկի ֆրանսերեն թարգմանությունն է։ Գրքի առաջաբանում Բրյուսելի համալսարանի նախկին ռեկտոր Մորիս Լըոռյը գովասանքով և հիացմունքով է խոսում այս արժեքավոր աշխատության մասին։ Ինչպես հայտնի է, Բրյուսելի համալսարանի հայագիտական ամբիոնի հիմնադիր Ն. Ադոնցը մինչև իր մահը (27 հունվար 1942 թ.) դասավանդել է այդ համալսարանում։

Գիրքը բաղկացած է ներածականից և հինգ գլուխներից՝ «Զեռագիր աղբյուրները», «Զեռա-

դրերի դասակարգումը», «Կորած տեքստերի վերականգնումը», «Վերականգնված տեքստերի վերլուծությունը»։ Վերջին՝ հինգերորդ գլուխը կոչվում է «Ընդհանուր եզրակացություններ»։

Գրքի տեքստային մասում «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունը նորին» (էջ 1—332) ընդհանուր խորագրի տակ զետեղված են քերականության արվեստի հայերեն և հունարեն տեքստը, «Հավելված» և «Բառք քերականին» ենթագլուխները։ Այնուհետև «Մեկնությունը քերականին» բաժնում տրված են Դավիթ փիլիսոփայի, Անանուն մեկնիչի, Մովսես Քերթոզի, Ստեփաննոս Սյունեցու, Գրիգոր Մագիստրոսի, Համամ Արեելցու մեկնությունները։ Գրքի վերջում կցված են անունների ցանկ (էջ 287—305) և այլ օժանդակ նյութեր։

ՄԱՐԶՊԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. Բաղդատական ակնաբկ մը կրօնական ճարտարապետության վրա և հայ ճարտարապետության տեղը անոր մեջ։ Իսթանբուլ, տպ. Մարմարա, 1970 թ., 200 էջ, նկարազարդ։

Ճարտարապետ հեղինակի այս աշխատությունը թեպետ գրված է ընթերցողների լայն շրջանի համար, սակայն այն պարունակում է նաև մասնագիտական տեղեկություններ։ Գրքում ուսումնասիրվում է հայ և օտար արվեստների փոխազդեցությունների հարցը։ Հ. Մարզպանյանը նշում է, որ Հայաստանում «ինչպես հին ասորա-քաղդեական, սասանական, նույնպես հունա-հռոմեական արվեստներու ներգործությունները երկարատև չեն եղած, ասոնք շուտով ձուլված են հայ արվեստի որոշ, ինքնուրույն ոճին մեջ և լիովին կերպարանափոխված

են»։ Հեղինակը առանձնապես ընդգծում է հայ ճարտարապետության ինքնուրույնությունը, համաշխարհային ղեղարվեստի պատմության մեջ՝ գրելով. «Հայ պաշտամունքի հուշարձաններու միջնադարյան ճարտարապետներն ալ խուսափած են կրկնութենե, և յուրահատուկ ոճ մը ըստեղծելով՝ համաշխարհային ղեղարվեստի պատմության շղթային կարևոր օղակ մը կցած են իրենց կոթողներով» (էջ 8)։

Գիրքը բաղկացած է 4 մասից։ Առաջին մասում քննարկվում է պաշտամունքային հուշարձանների հատակագծերի հորինման հարցը

պատմության զանազան շրջաններում: Մանրամասնորեն նկարագրված են տարբեր ժողովուրդների հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքային հուշարձանների հատակագծերը: Հեղինակը եզրակացնում է, որ հատակագծի հորինման հարցում «եբրայեցվոց տաճարը կետ առ կետ ձևված էր եգիպտական տաճարներու սկզբունքին»: Բնականաբար, հայ ճարտարապետներն էլ հատակագծային հորինման հարցում մեկնակետ են ընդունել համաշխարհային դասական ձևերը:

Նրկրորդ գլխում 2. Մարզպանյանը խոսում է կառուցման արվեստի և տեխնիկայի մասին: Սկզբում նկարագրում է եգիպտական, այնուհետև՝ Միջագետքի, սասանյան, պարսկական, հնդկական, չինական, էգեական, հունական, հռոմեական և հայկական արվեստի գործածած նախանյութերը և շինարարական տեխնիկան: Նրկրորդ գլխում հեղինակը ուսումնասիրում է

ճարտարապետական արվեստի մեջ ոճի և ձևի հարցը:

Գրքի շորրորդ մասում հեղինակը նկարագրում է Կարսի արևելյան կողմի գյուղերում իր կատարած ճանապարհորդության ընթացքում հանդիպած հայկական պաշտամունքային հուշարձանները: Այստեղ տեղեկություններ են տրվում Բաղրիշանի, Ուղունքիլիսեի, Տիգնիսի, Արգինայի, Կարմիր վանքի, Օղուղլուի, Կելրորի, Խծկոնքի, Բազարանի, Տեկորի, Կարսի, Հոռոմոսի, Բազնայրի, Անիի շուրջ 30 հուշարձանների մասին, ղեկավարած են հատակագծեր, նկարներ ու գծագրություններ: Հեղինակը ցուցվում է նշում, որ միջնադարյան հայ ճարտարապետության այս կոթողները թողնված են բնության քմահաճույքին ու աստիճանաբար ավերվում են:

2. ՄԵՔԵՐՅԱՆ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանը հայերեն ձեռագրերից բացի ունի այլալեզու ձեռագրերի կարևոր մի հավաքածու՝ Վերջինս ընդգրկում է մոտավորապես 2000 միավոր: Սրանց թվում կան յոթ հունարեն ձեռագրեր՝ № № 12, 25, 31, 68, 69, 77 և 131: Ստորև տալիս ենք հիշյալ գրչագրերի համառոտ նկարագրությունը:

1 (ՀՈՒՆ. № 12)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խառիսի), թերթ՝ 176, 180×120 մմ, միասյուն (140×90 մմ), տող՝ 21, ժմնկ.՝ XV դ.: Բվնդկ.՝ Աղոթագիրք:

2 (ՀՈՒՆ. № 25)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խառիսի), թերթ՝ 501, 205×145 մմ, միասյուն (140×90 մմ), տող՝ 18, ժմնկ.՝ XVI/XVII դ.: Բվնդկ.՝ Կեղծ Դուրբեասի՝ Բյուզանդական կայսրության ժամանակագրությունը, որն ընդգրկում է մինչև 1571 թ. ափս (թերթ 499բ):

Մատենագիտություն՝ Евгений Э. Гранстрем, տե՛ս «Византийский временник», XI (1956), էջ 285—286; Б. Горянов, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», V (1960), էջ 317—323

1 Տե՛ս Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (աշխատասիրությամբ Օ. Ե. Գանյանի, Ա. Զեյթունյանի և Փ. Անթարյանի), Ա, Երևան, 1965, սյուն. 192: Այլալեզու հուն. 131 ձեռագրի վրա մեր ուշագրությունն է հրավիրել Փ. Անթարյանը: Մեր ձեռքի տակ հնագրական աշխատանքի շունչն առնող, հարկադրված ենք եղել ձեռագրերի թվականները որոշել լույս հարաբերական հշտություններ:

(երկու արտատպություն) և «Византийский временник», VIII (1960), էջ 354—356; И. Н. Жебелева, տե՛ս «Византийский временник», XXVI (1965), էջ 101—102:

3 (ՀՈՒՆ. № 31)

Թուղթ (լուսադրոշմ՝ բազմաթիվ), թերթ՝ 52, 215×160 մմ, միասյուն (180×120 մմ), տող՝ 23, ժմնկ.՝ XVIII դ.: Բվնդկ.՝ Կանոններ (245 խորագրերով):

4 (ՀՈՒՆ. № 68)

Թուղթ (լուսադրոշմ՝ մեծագիր, լուսադրոշմը անվերժանելի), թերթ՝ 37, 230×170 մմ, միասյուն (180×110 մմ), տող՝ 28 (14-ը խաղեր, իսկ 14-ը բնագիր), ժմնկ.՝ XIX դ.: Բվնդկ.՝ Պատարագի երգեր:

5 (ՀՈՒՆ. № 69)

Թուղթ (լուսադրոշմ՝ մեծագիր, լուսադրոշմը անվերժանելի), թերթ՝ 4, 218×152 մմ, միասյուն (155×105 մմ), տող՝ 26 (13-ը խաղեր, իսկ 13-ը բնագիր), ժմնկ.՝ XIX դ.: Բվնդկ.՝ Պատարագի երգեր:

6 (ՀՈՒՆ. № 77)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ խառիսի և շրջանակի մեջ վեցթևանի աստղ), թերթ՝ 136, 203×150 մմ, միասյուն (140×95 մմ), տող՝ 26, ժմնկ.՝ XV դ.: Բվնդկ.՝ Սաղմոսաբան:

7 (ՀՈՒՆ. № 131)

Թուղթ (լուսադրոշմ՝ շրջանակի մեջ դառնուկ), թերթ՝ 39, 160×103 մմ, միասյուն (97×54 մմ), տող՝ 16, ժմնկ.՝ XVI/XVII դ.: Բվնդկ.՝ Կոստանդնուպոլսի ժողովի արձանագրությունները (879—880 թ.): Պիտի նշել, որ